ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

№ 2016-6-4-Ա

ք. Երևան 29.06.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի հունիսի 29-ի նիստում քննարկեց 2016 թվականի հունիսի 13-ին արտոնագրային հավատարմատար Արեգ Պետրոսյանի (այսուհետ՝ բողոքարկող) կողմից ներկայացված «Անցքերով թղթի թերթերի ամրակման սարքի (տարբերակներ)» գյուտի (հայտ AM20150124) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Գյուտի հայտը մերժվել էր հետևյալ հիմքերով.

Գործակալությունը որոշում է մերժել արտոնագիր տալը ամբողջությամբ քանի որ ներկայացված հավակնության սահմանմամբ՝ հայտարկված գյուտը՝ առաջին հայացքից (ակնհայտորեն, բացահայտորեն), չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված արտոնագրաունակության «գյուտարարական մակարդակ» պայմանին. Ըստ հայտատուի, գյուտի խնդիրն է՝ «սարքի հարմարավետության բարձրացումը»: Ներկայացված է «անցքերով թղթի ամրակման սարքի» չորս տարբերակ, որոնց, ըստ էության, էական հատկանիշների համախմբությունն հետեւյալն է.

1. սարքը պարունակում է առաձգական պլաստմասսայից կատարված բռնիչ, որի վրա կատարված է կողպեք՝ միմյանց մեջ մտնելու եւ մեկը մյուսի մեջ սեւեռվելու հնարավորությամբ սեւեռող տարրերի տեսքով (1-ին եւ 2-րդ տարբերակների դեպքում),
2. սարքը կատարված է առաձգական պլաստմասսայից սեւեռող տարրերի տեսքով, մի տարրը մյուսի մեջ մտնելու հնարավորությամբ եւ մի տարրի՝ մյուսում սեւեռվելու հնարավորությամբ՝ մի տարրի վրա սրանկյուն ելուստի եւ մյուս տարրի վրա համապատասխան գոգի միջոցով (3-րդ եւ 4-րդ տարբերակների դեպքում),
3. բռնիչն իրականացված է մեկ կամ երկու թիթեղի տեսքով (կախված տարբերակից),
4. թիթեղի հարթությանն ուղղահայաց կատարված են սեւեռող տարրեր՝ մեծ եւ փոքր սնամեջ գլանների տեսքով,

5. սեւեռող տարրերը կատարված են միմյանց մեջ մղլակվելու հնարավորությամբ, մասնավորապես առաջին եւ երկրորդ տարբերակներում՝ «տարրերից մեկի վրա կատարված է օղակաձեւ ելուստ՝ կորագիծ մակերեւույթով, իսկ մյուսի վրա այդ ելուստին համապատասխանող օղակաձեւ գոգ», իսկ երրորդ եւ չորրորդ տարբերակներում՝ «փոքր գլանի արտաքին մակերեւույթին ամբողջ պարագծով կատարված է սուր կամ ուղղանկյուն ելուստ, ընդ որում այդ գլանի արտաքին տրամագիծը ելուստից դեպի եզրը նվազում է մինչ մեծ գլանի ներքին տրամագծից փոքր չափսը, մեծ գլանի ներքին մակերեւույթին կատարված է այդ ելուստին համապատասխան սուր կամ ուղղանկյուն գոգ»,

6. բռնիչը (թիթեղը) եւ սեւեռող տարրերը կատարված են միեւնույն նյութից՝ որպես մեկ ամբողջություն:

Սակայն, առաջին հատկանիշը բացահայտված է առաջին եւ երկրորդ տարբերակների համար որպես ամենամոտ նմանակ ընտրված՝ BE1014115, B42F3/04, 2003 արտոնագրում:

Երկրորդ հատկանիշը բացահայտված է երրորդ եւ չորրորդ տարբերակների համար որպես ամենամոտ նմանակ ընտրված՝ CN2828412, B42F3/00, 2006 արտոնագրում:

Երրորդ եւ չորրորդ հատկանիշները բացահայտված են GB14242667, B29D31/00, B42F13/22, 1976; US 5018895, B42F3/02, B42F13/30, 1991; DE202005009646 U1, B42F13/12, 2005 տեղեկատվական աղբյուրներում:

Հինգերորդ հատկանիշի իրականացման տարբերակները հայտնի են տեխնիկայի մակարդակից՝ մղլակվող տարրերի իրականացման բազմաթիվ ձեւերից, մասնավորապես՝ սարքի 1-ին եւ 2-րդ տարբերակներում նկարագրված մղլակման ձեւը բացահայտված է DE202005009646 U1, B42F13/12, 2005 եւ US6076990, B42D1/08, B42F3/00, 2000 տեղեկատվական աղբյուրներում, իսկ սարքի 3-րդ եւ 4-րդ տարբերակներում նկարագրված մղլակման ձեւը՝ «ոչ անջատովի ամրակումը» բացահայտված է, մասնավորապես՝ 1960թ. ԱՄՆ-ում տրված US2937834 արտոնագրում:

Վեցերորդ հատկանիշը նույնպես հայտնի է տեխնիկայի մակարդակից, մասնավորապես բացահայտված է US 5018895, B42F3/02, B42F13/30, 1991 եւ US6076990, B42D1/08, B42F3/00, 2000 տեղեկատվության աղբյուրներում:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց նախնական քննարկման արդյունքներն այն մասին, որ կոլեգիան քննարկելով ներկայացված բողոքում բերված հիմնավորումները գտնում է, որ գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշումն իրավաչափ է և

բողոքը պետք է մերժվի: Դա հիմնավորվում է նրանով, որ իսկապես, ներկայացված հայտի նյութերում բերված սարքի առանձին հատկանիշները նոր չեն և հայտնի են տեխնիկայի մակարդակից: Նմանատիպ ամրակման մեխանիզմներ գոյություն ունեն և կիրառվում են տարբեր բնագավառներում, ինչը հիմք է որպեսզի բողոքը մերժվի:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես պնդեց, որ որոշումն իրավաչափ է:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արեգ Պետրոսյանի կողմից ներկայացված «Անցքերով թղթի թերթերի ամրակման սարքի (տարբերակներ)» գյուտի (հայտ AM20150124) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ